10. ՇԱՄՏԱՆ

Թագավոր մի կէղնի, ըտոր ըսկի վավակ չէղնի։ Օր մի դարվեշ մի հ'ու կէնե, կը մտնա տուն։

— Թագավոր,— կըսե դարվեշ,— քու նիաթ մ'էնի, քեզի տղե մի կէղնի։ Տաս տըսնուհինգ տարեկան կէղնի, անուն չդնես՝ հարի ես հ'իդամ։

Տղեն է կէղնի, կը մեծնա, կէղնի տաս տըսնուհինգ տարեկան։ Դարվեշ, կը տեսնի օր հ'անգցավ չէկավ, անուն կը դնեն։ Դարվեշ հ'ու կէնե, կը մտնա ներս։

Կըսե.— Թագավոր ապրած, ես քզի չըսի՞ տղի անուն չդնիս, հարի ես հ'իդամ, հ'որի՞ դրիր։

Թագավոր կըսե.— Դու հ'անգցար չէկար, տղեն լե մեծցեր էր, էղի մարդ, անուն դրի, բան չկա, քու սիրտ չմնա,—կըսե ու ձեռք կը տանե ճեպ։

Կըսե.— Դարվեշ, հ'ուզե օր տամ,— կէնե օր փարա հանե իտա դարվեշին։

Դարվեշ կըսե.— Ընծի փարա պետկ չէ, տուր քու տղեն տանիմ, տըսնուհինգ օր մնա իմ մոտ, մեկ լե բերեմ իտամ քզի։

Թագավոր կըսե.—Ա՛ռ ու գնա։

Դարվեշ կառնե կէրթա. կէրթա ակունքներու սար։ Տղին կըսե.— Ես կը կարդամ, իգա քար կը բացվի հ'իրարուց, կը մտնիս ներս, շամտան մի կա, կառնիս կիգաս, ակունք չէղնի վերուս քու հետ։

Տղեն կըսե.— Թըղ էղնի։

Դարվեշ կը բաշլև կարդալ, քար կը բացվի, տղեն կէրթա ներս։ Կը վերցու շամտան, կիդա օր հ'ելնի դուս՝ իսանի տմաքըբութեն, կըսե. «Ջա՛նըմ, ես ինչ խըղըր անգետ իմ, կանի էդա ակունքներուց լրփ մի վերում հ'ըլնամ իմ ճեպ, համեն, համեն էկեր իմ, կելնիմ դուս, ի՛նչ պրտի էղնի»։ Կըսե, ու ձեռք կը թալե օր ճանկ մի ակունք վերցու, քար կիգա հ'իրար, տղի օտներ կը մնա քարու մեջ, ղլուխ լև դուս։

Դարվեշ էդ օր կտեսնի, կը կարդա, չկարդա՝ էլ չարա չէղնի. կթողե դառնա էթա ուր տուն։

Տղեն է թե մեկ, թե էրկու օր կը մնա էդ տեխ։ Օրըմ լե կը տեսնի շողըմ կէրևա, կընկի շողի հ'ետևուց, կը բռնե ու կէրթա։

Կէրթա ծովում քենար կելնի դուռ. կը հանե ակունք մի կիդա դեմիճուն, կը նստի դեմին, կընցնի ծով, կէրթա էն դին։

Կէրթա էն դին. «Հ'ու՞ր էղնիմ մսաֆըր, հ'ու՞ր չէղնիմ», կը տեսնի օր պառավ մի կուժ մի շուր թևի վրեն՝ կէրթա։

Կըսե.— Պառա՛վ, ի՞նչ կէղնի հ'ըսօր տեխ մի տաս գամ պառկիմ, հ'ելնիմ լուսուն էրթամ։

Պառավ կըսե.— Հրա՛մե, թագավորի խաղնոցն է իմ տեխ, պառկի, հ'ելի, լուսուն գնա։

Կհ'ընկի պառվու հ'ետև կէրթա, փշում կը նստի կը հանգստի. ինքն ուրին կը մտածե, կըսե. «Ջա՛նըմ, սապաղ ի՞նչ է օր ես էտա խըղըր նեղութեն քաշի»։ Ձեռք կհ'ընկի շամտան, ձեռք կը տանե ճեպ, կը հանե, զարկե գետին։ Օր կը հանե զարկե գետին, դիվան մի կըբացվի, ակունքներով աթոռներ շարուկ մեջ, օսկի շամտըներ կը վառին, քառսուն հատ հուրի ու փերի, էն կըսե. «Ես իմ», էն կըսե՝ «Ե՛ս իմ». կըսին ու կը խաղան, չալղին, քեֆ ուրախութեն էլ մեկ թարաֆեն։

Թագավորի ախճկա փանչարն լե էդ խաղնոցի վրեն կաչքե. էդ ձեն օր կը լսե, կը ճամբե ուր բեսլամեն, կըսե.— Գնա՛ տես, էդ ի՞նչ չալղու ձեն է կիգա մըր խաղնոցից։

Բեսլամեն օր կիգա, խաղնոց կը մտնի, կը պաղի կը մնա, էլ օտկ չբռնե օր էրթա։

Էդ թագավորի ախճկան լե քառսուն հատ բեսլամա կէղնի, քառսուն լե հ'իրարու հ'ետևեն կը ճամբե օր կիգան կը տեսնին էտ քեֆն ուրախութեն։ Էլ օտ ուրանց չբռնե էրթան. կը մնան տղի մոտ։

Թագավորի ախճիկ կը տեսնի, որն օր ճամբեց չէկավ, չարեն կը կտրի ինք կելնի կէրթա։

Կելնի կէրթա՝ օր տեսնի։ Տղեն կվախենա օր էտոնք ուրանց օտներու մեջ առնին ուր շամտան, կը վերցու ղարկե դետին, ամեկ կէրթան ուր տեխ։ Կը վերցու դնե ուր տեխ։

Թագավորի ախճիկ ուր բեսլամեններուն կըսե.— Կառնիք քառասուն վարոց, լուսուն օր հ'ելավ էդ տղեն գնաց, հրմալ կը ղարկիք, հրմալ կը ղարկիք, լեղվե գ'ընկըցուք, հարի չհանե շամտան չիտա, թողեք էրթա։

Բեսլամեք կառնին քառասուն հատ վարոց կը խանեն դուռ։ Տղեն օր լուսուն կելնի կէրթա, կիգան հ'առջև վարոցք, էն խըդրը կը ղարկին, օր ճար կը կտրի, կը հանե շամտան կիտա, կը թողե էրթալ։

Կառնին ձեռքեն, տղեն կը թողե կէրթա։

Թագավորի ախճիկ կը տանի, կը ժողվե վոզիրի, փաշեքներու ախճիկներ ու կնկտիք կը բերե։ շամտան կը դնե օրթեն օր քեֆ էնե, էտոնք ուրխընան։

Օր կիգան կը քոմին, թագավորի ախճիկ ուր բեսլամին կըսե.— Սխճի՛, բեր էն շամտան դիր օրթեն, քեֆ թըղ էնե, խանըմներ քեֆ էնին։

Բեսլամեն օր կը բերե շամտան կը ղարկե դետին, կելին քառասուն արաբ մեկ մեկ չոմբախ ձեռք ուրանց ու կեդան էդ տեխ կնկըտիք ու ախճկտիք չոմբախի հ'առեջ վերն օր օտք կը կոտրին, վերն օր թև։

Թագավորի ախճիկ կըսե.— Բեսլամա՛, քու աստծու սերուն էղնի, հասի՛ ղարկ դետին, թըղ թողին էրթան էտոնք։

Բեսլամեն կը հասնի, կը ղարկե դետին, արբըներ կը կորին։

Իմալ կէղնի էդ ախճկներ ու կնկտիք կէրթան ուրանց մարթերուն խըսա կէնին։ Ձեն կէրթա կը հասնի թագավորի անկաճ, թագավոր կը ճամբե էդ շամտան, կառնի կէրթա։ Կառնի կէրթա, էդ ախճկներու պապեր տավաթ կէնե, կառնի գիգա։

Կըսե.— Արեք, իգա հրմլա բան մ'էղեր է։

Օր կբերե կետա շամտան թալելի ձեռք, կըսե.— Հելի քաղքի մեջ թալալ կանչե, բալքիմի իդա շամտնի տեր դտնիս։

Թալալ լե կառնի կհ'ընկնի չարսուի մեջ, կըսե.— Որն է իդա շամտնի տեր։ Թըղ հ'ելնի ալենկ առնի։

Մարթումի մեկ էն թարաֆեն դիգա։ կելնի սուտ տեր։

Թալալ կըսե.— Շատ աղեկ, օր էդ շամտան քումն է, ի՞նչ կէնիս։

Կըսե.— Կը դնեմ մոմ մեջ, վառեմ։

Թալալ ճըլոթ մի կը ղարկէ, կըսէ.— Կորի՛ գնա, քուփակ, դուսուտ տեր իս։

Իմալ կէղնի, էն թարաֆեն շամտնի տեր տղեն գիգա, կըսէ.— Իմն է, սուտ կըսէ էդ մարդ։

Թալալ կը ըռնէ էդ մարդ։

Կըսէ.— Քելէ էրթանք քղիկ թագավոր կը կանչէ։

Կառնի կէրթա թագավորի մոտ, կըսէ.— Բերի։

Թագավոր տղին կըսէ.— Էդա շամտան քո՞մն է։

Տղեն կըսէ.— Հա՛։

Թաղավոր կըսէ.— Լաո՛, էդ շամտնի հունարն ի՞նչ է, բացՀող նստող վոզիրներ սեր էնին, չվախենան։

Տղեն կը զարկէ շամտան գետին, օսկի աթոռներ, օսկի շամտըներ մոմեր մեջ ալայի չալղին, հուրի փարիներ գիգան օրթեն, կը ղարկին ու կը խաղան։ Նստողներ թամաշա կէնեն։

Օր կը տեսնան էդ բան, մաթ կը մնան։ Կըսին.— Թագավոր ապրած կենա, յոլն է օր քու ախճիկ տաս իդա տղին՝ կարգիս։ Հաննս ճամբցուս։

Նոր թագավոր կբերե ուր ախճիկ կետա էդ տղին։ Ցոթ օր դհոլ ու ղուռնեն կը զարկէ, քեֆ ուրախութեն կէնին։

Ընգոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձեր մուրազին։

Տղեն օր կը կարգվի, կը խըլըոի կը մնա ժուկ ու ժամանակ մի կելնի կը վերցու ուր կնիկն ու շամտան գիգա ուր հոր էրկիր, կէղնի ուր հոր տեխ թագավոր։